



Տարվա լավագույն մարզչի քվեարկության կարգ

1. «Տարվա լավագույն մարզիչ» անվանակարգում քվեարկության իրավունք ունեն

1. ՁԼՄ-ների ներկայացուցիչները (բացառությամբ ֆուտբոլային որևէ ակումբում աշխատող լրագրողների)
2. VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2020-2021թթ. մրցաշրջանի մասնակից թիմերի գործող գլխավոր մարզիչները:
3. VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2020-2021թթ. մրցաշրջանի մասնակից թիմերի ավագները:

2. «Տարվա լավագույն մարզիչ» անվանակարգում հաղթողի կոչմանը կարող են հավակնել

Օրացուցային տարվա ընթացքում Հայաստանի ազգային և տարբեր տարիքային հավաքականները, ինչպես նաև VBET Հայաստանի Պրեմիեր Լիգայի և Հայաստանի Առաջին խմբի մասնակից թիմերը գլխավորած մարզիչները (ներառյալ այն մարզիչները, ովքեր տարվա ընթացքում գլխավորել են մի քանի հավաքականներ և/կամ ակումբներ, կամ այլևս չեն հանդիսանում որևէ հավաքականի/ակումբի գլխավոր մարզիչ):

3. Քվեարկողներին առաջարկվում է վերը նշված սկզբունքով կազմված ֆուտբոլիստների ցուցակը, որոնցից պետք է ընտրել լավագույն երեքին:

Ակումբների ներկայացուցիչները չեն կարող քվեարկել մրցաշրջանի ընթացքում/տվյալ պահին իրենց ակումբը ներկայացրած/ներկայացնող թեկնածուի օգտին:

Քվեարկությունը պետք է ուղարկել thebest@ffa.am էլիասցեին՝ նշելով քվեարկության տարբերակը, անուն-ազգանուն, լրատվամիջոցի անուն, կցելով լրագրողական բեյջը և լուսանկարը:

4. Միավորների հաշվառումը կատարվում է ՀՖՖ Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից՝ հետևյալ կարգով. 1-ին տեղ՝ 5 միավոր, 2-րդ տեղ՝ 3 միավոր, 3-րդ տեղ՝ 1 միավոր:

5. Տարվա լավագույն մարզիչը պարգևատրվում է 2 միլիոն դրամով և հուշանվերով: